



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր**

Երևան, Բաղրամյան 19, 333 սենյակ, հեռախոս (10) 51-33-58

«20-ի դեկտեմբերի 2012թ.

N 030-Ե-39

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Աբրահամյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրություն 75-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգե ՀՀ օրենքի 47-րդ և 50-րդ հոդվածների՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու կատարելու մասին և «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթը:

Նախագծերի փաթեթին կից ներկայացվում են օրենքների նախագծերի փաթեթի ընդունման հիմնավորումը, օրենքների նախագծերի փաթեթի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության և գործող օրենքների լրացվող հոդվածների մասին տեղեկանքները:

Խնդրում եմ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝

Է. Մարության

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի 24-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Նույն անձը համայնքի ղեկավարի պաշտոնում կարող է ընտրվել ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ընտրական օրենսգրքի 132-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ մասով.

«1.1. Նույն անձը համայնքի ղեկավարի պաշտոնում կարող է ընտրվել ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

**«Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում
լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի
փաթեթի ընդունման**

1.1. Իրավական ակտի անհրաժեշտությունը. Սույն փաթեթի ընդունումն անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգը բարեփոխելու և տեղական ժողովրդավարության զարգացման նպատակով:

1.2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. 2002 թվականի մայիսի 7-ին ընդունված տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածով նախատեսվում էր՝

«Համայնքի ղեկավար կարող է ընտրվել 25 տարին լրացած, առնվազն մեկ տարի տվյալ համայնքի բնակիչ համարվող Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի:

Համայնքի ղեկավարը պետք է ունենա միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն կրթություն: Նույն անձը համայնքի ղեկավարի պաշտոնում կարող է ընտրվել ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ:

2006 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին սահմանեց՝

«Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում (7 մայիսի 2002 թվականի, ՀՕ-337) ուժը կորցրած ճանաչել օրենքի 24-րդ հոդվածի երկրորդ մասի վերջին նախադասությունը:

Այսպիսով, գործող օրենքի 24-րդ հոդվածն այսօր ունի հետևյալ բովանդակությունը՝

«Համայնքի ղեկավար կարող է ընտրվել 25 տարին լրացած, տվյալ համայնքում առնվազն վերջին երկու տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի:»

1999 թվականի փետրվարի 5-ին ընդունված Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում (ուժը կորցնելու ամսաթիվը՝ 2011 թվականի հունիսի 26) 2005 թվականի մայիսի 19-ին փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի (դ) կետով 123-րդ հոդվածում ավելացվեց հետևյալ բովանդակությամբ 9-րդ կետ.

«9. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել համայնքի ղեկավարի պաշտոնում:»

2006 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունված Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 98-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսվեց. «Օրենսգրքի 123-րդ հոդվածում 9-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:»

Հայաստանի Հանրապետության նոր (գործող) ընտրական օրենսգրքում նման սահմանափակում իսկզբանե չի եղել և այս պահի դրությամբ այդ մասով լրացում/փոփոխություն չի կատարվել:

Այլ երկրներում նախատեսվում են պաշտոնավարման ժամկետի տևողության

և/կամ քանակի սահմանափակումներ սահմանադրության կամ օրենքի մակարդակով:

Այսպես, Ֆիլիպինների Սահմանադրության (1987թ.) X հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ ընտրովի տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձնաց պաշտոնավարման ժամկետը 3 տարի է և այդպիսի պաշտոնատար անձը չի կարող անընդմեջ 3 անգամից ավելի պաշտոնավարել:

Միացյալ Նահանգների Նյու-Յորք քաղաքում (համարվում է ԱՄՆ ամենամեծ մունիցիպալիտետը՝ 50 մլրդ դոլար տարեկան բյուջեով) 2010թ. նոյեմբերի 2-ի հանրաքվեով որոշվեց նախկինում ընդունված 3 անգամ անընդմեջ ընտրվելու՝ քաղաքապետի /Mayor/ իրավունքի փոխարեն սահմանել 2-ը: Այսպիսով, ներկայիս Նյու-Յորքի քաղաքապետը պաշտոնավարելու է ևս 2 անգամ անընդմեջ **վերը** ընտրվելու իրավունքով, իսկ հաջորդ քաղաքապետից սկսած՝ 1 անգամ (New York City Charter):

Ֆիլադելֆիայում (Փենսիլվանիա նահանգ) նույն անձը չի կարող քաղաքապետ չի կարող ընտրվել 3 անգամ անընդմեջ:

Հյուսթոնում (Թեքսաս նահանգ) պաշտոնավարման ժամկետը 2 տարի է, կարելի է անընդմեջ առաջադրվել 3 անգամ, Ման-Անոնիո և Թեքսաս քաղաքներում՝ 4 անգամ:

Ցինցինատիում (Օհայո) նույն քաղաքապետը կարող է պաշտոնավարել 2 անգամ ընդընդմեջ՝ յուրաքանչյուր անգամ 4 տարով: Նույն կարգն է գործում Ֆրեդերիկում (Կոլորադո):

Յունիոն Սիթիում (Կալիֆորնիա) ուղղակի ընտրությունների միջոցով ընտրված քաղաքապետը պաշտոնավարում է 4 տարի և կարող է անընդմեջ առաջադրվել ոչ ավելի, քան 3 անգամ: Անընդմեջ 3-անգամյա պաշտոնավարումից հետո նույն անձը կարող է կրկին առաջադրվել միայն 2 տարի անց:

Կլովիս քաղաքի (Նյու Մեքսիկո) կանոնադրությունը (Charter for the City of Clovis) սահմանել է, որ 2 անգամ հաջորդաբար պաշտոնավարած քաղաքապետը չի կարող կրկին դնել իր թեկնածությունը, քանի դեռ իր պաշտոնավարումից հետո 1 լրիվ պաշտոնավարման ժամկետ չի լրացել:

Իրվինում (Կալիֆորնիա նահանգ) քաղաքի կանոնադրության 4-րդ հոդվածը նախատեսում է, որ քաղաքապետն ընտրվում է 2 տարով: Նույն անձը չի կարող պաշտոնավարել ավելի, քան 2 անգամ անընդմեջ:

Ջեքսոնվիլում (Ալաբամա) քաղաքապետը և քաղաքային խորհրդի անդամները պաշտոնավարում են 4 տարի: Քաղաքապետը կարող է վերընտրվել միայն մեկ անգամ անընդմեջ: 2 անգամ անընդմեջ պաշտոնավարած քաղաքային խորհրդի անդամը կարող է առաջադրվել որպես քաղաքապետի թեկնածու, սակայն 2 անգամ անընդմեջ պաշտոնավարած քաղաքապետը չի կարող առաջադրվել որպես քաղաքային խորհրդի անդամ:

2012 թվականի Մեպտեմբերի 9-ին Հանրապետության 482 համայնքներում տեղի ունեցան ՏԻՄ ընտրություններ, որից 380 համայնքում համայնքի ղեկավարներ են ընտրվել: Ընտրությունների արդյունքում 84 համայնքներում ընտրվել են ոչ գործող համայնքապետերը, որից 41-ը սեփական կամքով չեն մասնակցել ընտրություններին, իսկ 43-ը՝ պարտվել են:

Այսպիսով, 296 համայնքներում ընտրվել են գործող համայնքի ղեկավարները, որոնցից շատերը, եթե ոչ կեսից ավելին համայնքի ղեկավարի պաշտոնում ընտրվել են

անընդմեջ երկու անգամից ավելի:

Պաշտոնում անընդհատ վերընտրվելու հնարավորության սահմանափակումն ունի կարևոր նշանակություն հատկապես հետևյալ հարթություններում.

1. Այդպիսով ավելանում է ընտրարշավի ժամանակ մրցակցելու հնարավորությունը
2. Նոր հնարավորություններ ազգային փոքրամասնությունների համար
3. Վերընտրվելու հնարավորության սահմանափակման շնորհիվ արդեն իսկ մի քանի անգամ պաշտոնավարած համայնքի ղեկավարը տեղը զիջում է հասարակ մարդկանց, ովքեր առավել քաջատեղյակ են տվյալ պահի իրական խնդիրների մասին, այդպիսով նաև հանրային կարծիքն առավելագույն չափով ներդաշնակվում է քաղաքական ընթացքին
4. Նպաստում է նոր մտքերի ու թարմ հայացքների ներգրավմանը՝ բնականաբար կախված նրանից, թե ով է գալիս փոխարինելու նախկին ղեկավարին, տեղական մակարդակում նոր մարդկանց նոր գաղափարներ իրացնելու եւ նոր քաղաքականություն վարելու հնարավորություն:

Վերջին ընտրությունների արդյունքները ցույց են տալիս, որ պետք է նույն անձի համայնքի ղեկավարի պաշտոնում անընդմեջ երկու անգամից ավելի ընտրվելու արգելքը վերականգնվի, որովհետեւ նույն անձի անսահմանափակ ընտրվելու հնարավորությունը վտանգում է ժողովրդավարության զարգացումը տեղական մակարդակում: Այս առաջարկությունը նաեւ համահունչ է համայնքների խոշորացման բարեփոխման հետ:

1.3. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Նախագծերի սույն փաթեթով առաջարկվում է սահմանափակել համայնքի ղեկավարի՝ անընդմեջ 2 անգամից ավելի ընտրվելու հնարավորությունը:

2. Կարգավորման առարկան. Փաթեթի կարգավորման առարկան է համայնքի ղեկավարի պաշտոնում վերընտրվելու հնարավորության սահմանափակման հետ կապված իրավահարաբերությունը:

3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը. Սույն փաթեթի ընդունման արդյունքում կսահմանափակվի նույն անձի՝ համայնքի ղեկավարի պաշտոնում 2 անգամից ավելի անընդմեջ առաջադրվելու հնարավորությունը:

Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության
օրենքում լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության ընտրական
օրենսգրքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների
նախագծերի փաթեթի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման
անհրաժեշտության բացակայության մասին

«Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ

ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 24. Համայնքի ղեկավարը

Համայնքի ղեկավար կարող է ընտրվել 25 տարին լրացած, տվյալ համայնքում առնվազն վերջին երկու տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի:

(Նախադասությունը հանվել է 26.05.11 ՀՕ-167-Ն)

(Նախադասությունն ուժը կորցրել է 28.11.06 ՀՕ-226-Ն)

(24-րդ հոդվածը փոփ. 28.11.06 ՀՕ-226-Ն, խմբ. 30.09.08 ՀՕ-166-Ն, փոփ. 26.05.11 ՀՕ-167-Ն)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ**

Հոդված 132. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներին առաջադրվող պահանջները

1. Համայնքի ղեկավար կարող են ընտրվել 25 տարին լրացած, ընտրություն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում մինչև քվեարկության օրը առնվազն վերջին 6 ամիսը հաշվառված, սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք:
2. Համայնքի ավագանու անդամ կարող են ընտրվել 21 տարին լրացած, ընտրություն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում մինչև քվեարկության օրը առնվազն վերջին վեց ամիսը հաշվառված, սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք:
3. Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու չեն կարող առաջադրվել սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, դատախազները, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, դատական ակտերի հարկադիր կատարման, փրկարարական, հարկային, մաքսային մարմիններում, քրեակատարողական հիմնարկներում ծառայողները, զինծառայողները, ընտրական հանձնաժողովի անդամները: